# ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
# ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, Ս. Զատիկ 1976

Նորին Ամենապատուութիւն
Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Տէրտէրեան
Պատրիարք Երուսաղէմի Հայոց
Ե ր ո ւ ս ա ղ է մ

## ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ

Մեծ աւետիսը մեր Տիրոջ և Փրկչի հրաշալի Յարութեան, մեր սրտերը վերստին կը լեցնէ լոյս զգացումներով և սուրբ սպասումներով:

Փրկչի Իջման Նուիրական Սեղանի առաջ աղօթող ենք որ փրկարար այս աւետիսի շնորհները առատապէս բաշխուին մեր ժողովուրդի բոլոր զաւակներուն, որպէսզի անոնք կարող ու արժանի դառնան «որդիք լուսոյ» կոչուելու, միշտ աներեր մեր նախնեաց հաւատքի վէմին վրայ, միշտ հաւատարիմ Հայաստանեայց մեր Մայր Եկեղեցւոյն, միշտ պատրաստ՝ բարին գործելու իրենց կեանքի ճանապարհին:

Մեր մշտանորոգ մաղթանքն է նաև որ յարուցեալ Փրկչի՝ աշխարհին թողած խաղաղութեան ոգին, աւելի ու աւելի ճառագայթէ մարդոց ու ազգութիւններու հոգիներէն ներս, առաջնորդելու համար զանոնք դէպի նաւահանգիստը արդար ու համերաշխ գոյակցութեան, յերջանկութիւն բոլորին անխտիր:

Սուրբ Յարութեան ուրախութեամբ, եղբայրական սիրով կ՚ողջունենք Ձերդ Ամենապատուութիւնը և մեր ամենաբարի մաղթանքներն ու օրհնութիւնը կը բերենք Սուրբ Աթոռիդ զինուորեալ միաբանութեան և համայն մեր հաւատացեալ ժողովուրդին:

«Գիտեմք եթէ Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց, այսուհետև ոչ մեռանի, մահ նմա ոչ ևս տիրէ: Զի որ մեռաւն՝ մեղացն մեռաւ միանգամ, և որ կենդանին է՝ կենդանի է Աստուծոյ: Նոյնպէս և դուք համարեցջիք զանձինս մեռեալս մեղացն, և կենդանիս Աստուծոյ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր» (Հռոմ. Զ 9-11):

Օրհնեալ է լոյս Յարութիւնն Քրիստոսի, այժմ և յաւիտեան. ամէն:

Վ Ա Զ Գ Է Ն Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

digitised by A.R.A.R.@